

Կը պատմուի թէ, յիշեալը օր մը տեսնելով ձրիօրէն ըմպող չտեսներու ձեւակերպութիւնները, ըսած է նշանակալից շեշտով մը.—

« Օղիի չափը ոսկի մը ըլլալու է որ խմողն ու չխմողը յայտնի ըլլայ »:

« Բաղընրն օգտալըը պիր լիրայա օլմալը քի, իչէն իշմէյէն պէլլի օլտուն »:

Ա Պ Ր Ե Լ Ա Կ Ե Ր Պ

Մահացու մեղքերէն մին է նկատուած որկրամոլութիւնը, բայց հաշուուած տնտեսութեան մը մէջ անոր քիչ տեղ կը մնայ:

Խնայողութեամբ ու ժուժկալութեամբ կ'ապրէր ամէն ոք, առանց զրկուելու անհրաժեշտ սնունդէ: Կային փարթամ կեանք վարողներ, շատ ալ աժան էր ապրուստը, բայց դրամը կը պակսէր:

Տօնացոյցի համաձայն պահքը ու ծոմը կը պահուէր ուր որ բարեպաշտ մամիկ մը կար եւ որու ձեռքին տակ էր ուտելիքի մատակարարումը:

Ճաշացանկին վրայ մեծ տեղ կը դրուէին կանաչեղէն ու ընդեղէն կերակուրներ իրենց բազմաթիւ տեսակներովը: Տօն ու Կիրակի օրեր ընդհանրապէս կ'ունենայինք խորոված, անուշեղէն կամ խմորեղէն կերակուրներ:

Առողջապահական հաշիւներով օրինական նկատուած էին որոշ կերակուրներ: Օրինակ.— էրլիշտայով Շարվան: Սուրբ Սարգիսի տօնի առթիւ օրերով ծոմապահութենէ վերջ, երբ աղիքներ պարպուած ու տկարացած կ'ըլլային, լաւագոյն կերպն էր այդպիսի թեթեւ ապուրով մը բանալ ծոմը:

Սովորութիւն էր սեղանի վրայ ունենալ աղցան ու սալատ:

Չաշուր, սէյրէթմէ, բերբեր տեղական բոյսեր էին ու կ'օգտագործուէին, ինչպէս նաեւ տակի ու բազուկի թուրշիներն ու դաշտերու ծանօթ բանջարները, քախտիկ, քոռքիկ, ծագու բանճար, ու այլ կանաչեղէններ:

Պատրաստ կ'ունենային կտրուած մանթի, հակիթով մախարնա, եւ նեղ ու ժապաւինաձեւ էրիւշտաներ, փուռի մէջ խարկուած:

Ձըրագտընէն ձուկ կը բերուէր նաւակատիք օրերուն ու կը ծախուէր հայ թաղերու մէջ:

Խթման իրիկունը կը տապկուէր սպաննախ կամ չոր մսէ դրում, հակիթով ու կարագով:

Տաղաւարներուն սովորութիւն էր կաթայ եփելը: